# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 642 – Ա 23 դեկտեմբերի 2020 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 296-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին ու 3-րդ մասերի և 34-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1641-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1535-Ն որոշումները

*որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 20-ի N 128 որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 296-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝ հավելվածի

   1) 25-րդ կետում և 31-րդ կետի 1-ին ենթակետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,
   2) 33-րդ կետի 4-րդ ենթակետը հանել,
   3) 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին ենթակետով. «13.1) քննարկում է դպրոցի ծնողական խորհրդի՝ տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն, իր դիրքորոշման հետ միասին, ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին.»,
   4) 39-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) խորհրդի յուրաքանչյուր նիստից հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, նիստի արձանագրությունը ներկայացնում է հրապարակման՝ դպրոցի պաշտոնական կայքում.»,

5) 69-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«69. Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հաստատության տնօրենի պաշտոնակատար է նշանակում տնօրենի տեղակալներից մեկին կամ հաստատության տնօրենի պարտականությունները կատարող այլ անձի, ով տվյալ հաստատության խորհրդի անդամ չէ: Տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում տվյալ հաստատության տնօրենի լիազորությունները դադարեցված անձը չի կարող նշանակվել նույն հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ պարտականությունները կատարող:»,

6) 77-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«77. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները:»,

7) 93-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.»,

8) 125-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«125. Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Պետական գույքի վարձակալության տրամադրման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731, 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:».

9) 125-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 125.1-ին կետով՝

«125.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես դպրոցին իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան դպրոցին փոխանցելու համար:»:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի:
3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Հարությունյանին՝
   1) ապահովել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունների և լրացումների պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին.
   2) կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Վահագն Դաբաղյանին:

23.12.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Digitally signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ